ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ՌԱԶՄԱԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏ ՇԱՏՎՈՐՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ՍՄԿԿ-ի ծավալած վիթխարի գործունեության մեջ կարևոր տեղ էր գրավում նրա ռազմակազմակերպչական աշխատանքը, որն ուղղված էր մեր երկրի մարդկային և նյութական ռեզերվների մոբիլիզացմանը և դրանք թշնամու ջախջախման գործին ծառայեցնելուն։ 1941 թ. հունիսի 29-ին ՍՍՀՄ Ժողկոմխորհը և Համկ/բ/կ Կենտկոմը ընդունեցին դիրեկտիվ՝ ուղղված «ճակատամերձ մարզերի կուսակցական և սովետական կազմակերպություններին»[1]։ Այն դարձավ ֆաշիստական ագրեսորների դեմ պայքարի նպատակներն և խնդիրներն որոշող կարևորագույն ծրագրային փաստաթուղթ։ Դիրեկտիվում մասնավորապես պահանջվում էր թիկունքի ամբողջ աշխատանքը ենթարկել ռազմաճակատի շահերին, վերջ տալ խաղաղ ժամանակվա տրամադրություններին, ապահովել բոլոր ձեռնարկությունների անխափան աշխատանքը, կազմակերպել գործարանների, էլեկտրակայանների, կամուրջների, փոստ-հեռագրատների պաշտպանությունը, պայքար կազմակերպել թիկունքի կազմալուծիչների, խուճապ առաջացնող, կեղծ լուրեր տարածողների դեմ, ոչնչացնել լրտեսներին, դիվերսանտներին, թշնամու պարաշյուտիստներին։

Պատերազմի առաջին իսկ օրերին Մոսկվայի և Լենինգրադի աշխատավորների նախաձեռնությամբ ստեղծվեցին ժողովրդական աշխարհազորի զորամասեր՝ կարմիր բանակին աջակցելու համար։ Այդ նախաձեռնությունը լայն արձագանք գտավ երկրի բոլոր շրջաններում։ Սովետական Հայաստանի աշխատավորությունը ևս չերմորեն ընդունեց ժողովրդական աշխարհազոր ստեղծելու նախաձեռնությունը։ Այդ կապակցությամբ հանրապետությունում տեղի ունեցան բազմամարդ միտինգներ։ Ս. Մ. Կիրովի անվան քիմկոմբինատում 1941 թ. հուլիսի 7-ին տեղի ունեցած միտինգում հանդես եկավ ՀԿ(բ)Կ Երևանի քաղկոմի քարտուղար Ս. Ղևոնդյանը։ Կրակոտ ելույթներ ունեցան նախկին պարտիզան Ավետիք Աղեկյանը, արտադրամասի պետ Ռուբեն Թումանյանը, ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Նվարդ Մուրադյանը և ուրիշներ։ Նրանք իրենց գոհունակությունն էին հայտնում ժողովրդական աշխարհազորի կազմակերպման առթիվ և խնդրում իրենց ցուցակագրել աշխարհազորի շարքերում։ Ընդունված բանաձևում կիրովցիները նշում էին. «Մենք բոլորս մեկ մարդու նման մտնում ենք աշխարհազորի շարքերը, հերոսական կարմիր բանակին աջակցություն ցույց տալու և թշնամուն մինչև վերջ ջախջախելու համար»[2]։ Բազմամարդ միտինգներ տեղի ունեցան նաև Անդրերկաթուղու Երևանի հանգույցում, Լենինականի, Կիրովականի, Ղափանի, Ալավերդու, Ստեփանավանի և հանրապետության մյուս շրջանների արտադրական ձեռնարկություններում, կոլտնտեսություններում ու սովխոզներում։ Հայֆիլհարմոնիայի ամառային դահլիճում 1941 թ. հուլիսի 7-ին տեղի ունեցավ մայրաքաղաքի մտավորականության միտինգ, որտեղ ոգեշունչ ելույթներ ունեցան ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Հայկանուշ Դանիելյանը, բանաստեղծներ Նարի Զարյանը, Գուրգեն Բորյանը, պրոֆեսորներ Վահան Արծրունին, Արտա-

---

[1] «Коммунистическая партия в Великой Отечественной войне (1941 г.—1945 г.)», М., 1970, с. 41.

[2] *«Սովետական Հայաստան», 8. VII. 1941։*

շես Մելիք-Ադամյանը, ժողովրդական ուսուցիչ Սիմակ Սահակյանը և ուրիշներ։ Նրանք զայրույթով էին խոսում հիտլերյան ավազակախմբերի չարագործությունների մասին և պատրաստակամություն հայտնում զենք վերցնել հայրենիքը պաշտպանելու համար[3]։

Հանրապետության քաղաքներում և գյուղերում մի քանի օրում աշխարհազորի շարքերում ցուցակագրվեցին շուրջ 57 հազար հոգի[4]։ Դրանք կոմունիստներ և կոմերիտականներ էին, առաջավոր բանվորներ և կոլտնտեսականներ, մտավորականներ, նախկին պարտիզաններ, քաղաքացիական կռիվների մասնակիցներ, կանայք ու աղջիկներ։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի 1941 թ. հուլիսի 12-ի որոշմամբ ստեղծվեց ժողովրդական աշխարհազորի հանրապետական շտաբ։ Նրա կազմում ընդգրկված էին ռազմական գործի մասնագետներ, կուսակցական և սովետական ղեկավար աշխատողներ։ Հանրապետությունում ստեղծվեց աշխարհազորային 10 տեղամաս, որոնցից ամեն մեկում մտնում էին մի քանի շրջանների աշխարհազորային միավորումներ։ Նրանք աշխարհազորի վերաբերյալ ղեկավարությունն ու ցուցումները ստանում էին տեղամասային շտաբից։ Տեղամասային շտաբների պետեր և քաղաքական պրոպագանդայի ղեկավարներ նշանակվեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմի, քաղկոմների և շրջկոմների, սովետական մարմինների և ռազմական կոմիսարիատների ղեկավար աշխատողներ։ Աշխարհազորային ստորաբաժանումների հրամանատարներն ու քաղաքական ղեկավարները նշանակվում էին կուսակցության քաղաքային և շրջանային կոմիտեների կողմից։ Աշխարհազորային ստորաբաժանումները կազմակերպվում էին տերիտորիալ-արտադրական սկզբունքով։ Ձեռնարկության ներսում կոլեկտիվի անդամներից կազմակերպվում էր դրուժինա՝ 10—20 հոգուց բաղկացած, 3 դրուժինա միանալով՝ կազմում էին խումբ, որոնք միավորվելով կազմում էին ջոկատ։ Մի քանի ջոկատ միավորվելով կազմում էին գունդ կամ բրիգադ։ Մեկ տեղամասային շտաբի մեջ էին մտնում մեկ կամ երկու բրիգադ կամ գունդ։ Ջոկատների կոմպլեկտավորման ժամանակ մարտիկներին ավելի բարձր պահանջներ ներկայացվեցին։ Ֆիզիկապես վատառողջ և մեծ տարիքի անձինք, ինչպես նաև կանանց մեծ մասը հանվեց աշխարհազորից։ Նրանք ընդգրկվեցին հակաօդային պաշտպանության խմբակներում։ Այդ հանգամանքը բարձրացրեց աշխարհազորային ստորաբաժանումների մարտունակությունը։ 1941 թ. հուլիսի 20-ից բոլոր տեղամասերում սկսվեցին ռազմական ուսուցման պարապմունքները։ Այդ նպատակի համար առանձնացվեց վարժական սպառազինություն, հրատարակվեցին «Օգնություն ժողովրդական աշխարհազորի դրուժիններին» մատենաշարով բրոշյուրներ։ Աշխարհազորայինները սովորում էին զենքի կառուցվածքը, դրանց գործադրման ձևերը, կատարում էին տակտիկական զորավարժություններ, հաճախ գիշերային ժամերին կառուցում էին խրամատներ, կրակակետեր և պաշտպանական այլ ամրություններ։

Ընդհանուր պարտադիր ռազմական ուսուցման անցնելու կապակցությամբ աշխարհազորայինների մարտական ուսուցումը սկսեց տարվել ռազմուսի մարտիկների համար սահմանված ծրագրով։ Նրանց ջոկատները վերակառուցվեցին ըստ բանակային ստորաբաժանումների[5]։

1941 թ. աշնանը հանրապետության աշխարհազորային ստորաբաժանումները հիմնականում ավարտեցին մարտական ուսուցման ծրագիրը։ Մարտիկները ձեռք բերեցին անհրաժեշտ ռազմական գիտելիքներ։

Մոսկվայի հերոսական պաշտպանության օրերին՝ 1941 թ. աշնանը, Հայաստանի աշխատավորությունը, սովետական ողջ ժողովրդի հետ միասին,

---

3 Նույն տեղում, 9. VII. 1941։

4 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ (այսուհետև ՄԼի ՀՄԿԱ), ֆ. 4033, ց. 6, գ. 122, թ. 4։

5 «Коммунистическая партия в Великой Отечественной войне (1941 г.—1945 г.)», с. 57.

ջերմ ցանկություն հայտնեց մասնակցելու Մոսկվայի պաշտպանությանը։ Այդ օրերին Հայաստանի բանվորներից, կոլտնտեսականներից, աշխատավոր ինտելիգենցիայից, այդ թվում աշխարհազորայիններից ստացվեց շուրջ 137 հազար դիմում, որոնցում խնդրվում էր իրենց ուղարկել մասնակցելու Մոսկվայի պաշտպանությանը[6]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը հավանություն տվեց հայրենասիրական այդ շարժմանը։ Զինվորական կոմիսարիատների միջոցով աշխարհազորայինների անձնակազմից մոտավորապես 3 հազար հոգի մոբիլիզացվեց և ուղարկվեց ռազմաճակատ[7]։ Նրանցից շատերը Մոսկվայի ժողովրդական աշխարհազորի շարքերում ընդգրկված հարյուրավոր հայ ուսանողների և գիտական աշխատողների հետ միասին մասնակցեցին Մոսկվայի հերոսական պաշտպանությանը[8]։ Այսպիսով, իրագործվեց Հայաստանի ժողովրդական աշխարհազորի առջև դրված մարտական խնդիրներից մեկը՝ անմիջական մասնակցություն ունենալ հայրենիքի պաշտպանության մարտերին։

Աշխարհազորային ստորաբաժանումները շուտով համալրվում էին նոր մարտիկներով։ Այսպես, 1941 թ. դեկտեմբերի 1-ի տվյալներով հանրապետությունում կար աշխարհազորային 52 գումարտակ, որտեղ ընդգրկված էին 25530 մարտիկներ[9]։

ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոն 1941 թ. դեկտեմբերին քննարկեց աշխարհազորայինների ռազմական ուսուցման ընթացքը՝ Սևանի, Եղեղնաձորի, Արտաշատի և Երևանի տեղամասերում։ Նշվեց մարտական և քաղաքական ուսուցման ասպարեզում ձեռք բերված հաջողությունները և հարց դրվեց ուսուցումը առավելագույն չափով մարտական պայմաններին մոտեցնելու անհրաժեշտության մասին[10]։

ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյի որոշումից հետո աշխարհազորայինների մարտական ուսուցումը նոր թափ ստացավ. տեղի ունեցան մասսայական զորավարժություններ։ 1941 թ. դեկտեմբերի 13—14-ին Երևանի տեղամասում տեղի ունեցան ընդհանուր զորավարժություններ, որոնց մասնակցում էին շուրջ 4500 հոգի։ Մասսայական զորավարժություններ անցկացվեցին Լենինականի, Կիրովականի, Արտաշատի, Գորիսի, Էջմիածնի և մյուս տեղամասերում։ Դրանք ցույց տվեցին, որ ժողովրդական աշխարհազորի մարտիկները մարտական և քաղաքական պատրաստության գործում ձեռք են բերել զգալի հաջողություններ[11]։

1942 թ. փետրվարի 1—24-ը տեղի ունեցան համամիութենական կոմերիտական-արհմիութենական դահուկային արշավներ, որոնց ակտիվորեն մասնակցեցին նաև հանրապետության ժողովրդական աշխարհազորի ստորաբաժանումները։

Գյուղական վայրերում ժողովրդական աշխարհազորի ստորաբաժանումների պաշտպանությանն էին հանձնված կամուրջները, հեռախոսային և հեռագրային գծերը, կոլտնտեսային դաշտերն ու պահեստները, գյուղերն ու այլ բնակավայրեր։

Կովկասի պաշտպանության օրերին հանրապետության ներքին կյանքում մտցվեց ճակատամերձ շրջաններին յուրահատուկ կարգ։ Երևանում և մյուս քաղաքներում սահմանվեց պարետային ժամ։ Աշխարհազորային ստորաբաժանումները պարեկություն էին կատարում, մասնակցում կարգուկանոնի և լուսաքողարկման կարգի պահպանմանը[12]։

---

6 В. А. Мурадян, Братство, скрепленное кровью, М., 1969, с. 57.

7 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 122, թ. 2։

8 «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 527։

9 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 29, գ. 330, թ. 37։

10 Նույն տեղում, ց. 30, գ. 35, թ. 139։

11 Նույն տեղում, ց. 30, գ. 302, թ. 137։

12 ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության արխիվ, ֆ. 400, ց. 9468, գ. 15, թ. 334։

Ազգային դիվիզիաների ստեղծման կապակցությամբ, 1942 թ. սկզբներին ավելի քան 1800 աշխարհազորայիններ ուղարկվեցին հայկական դիվիզիաներ։ 1941—1943 թթ. ռազմաճակատ են ուղարկվել ավելի քան 15 հազար աշխարհազորայիններ։ Նրանցից շատերը մասնակցել են Հյուսիսային Կովկասի, Ղրիմի, Ուկրաինայի, Լեհաստանի ազատագրման մարտերին և հասել մինչև Բեռլին։

Աշխարհազորային ստորաբաժանումները հանրապետությունում գոյություն ունեցան մինչև 1944 թ. հունիսը, մինչև վերջ պահպանելով իրենց մարտունակությունը։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքի ամրապնդման գործում մեծ նշանակություն ունեցավ ՀամԿ/բ/Կ Կենտկոմի և ՍՍՀՄ Ժողկոմխորհի 1941 թ. հունիսի 24-ի՝ «Մերձճակատային շրջաններում թշնամու պարաշյուտային դեսանտների և դիվերսանտների դեմ պայքարի միջոցառումների մասին» որոշումը։ Այն լայն արձագանք գտավ մերձճակատային, ինչպես նաև թիկունքային մարզերի ու հանրապետությունների կուսակցական և սովետական կազմակերպություններում, սովետական ողջ ժողովրդի մեջ։ ՀԿ/բ/Կ Կենտկոմը 1941 թ. հունիսի 29-ին քննարկեց կործանիչ գումարտակներ ստեղծելու մասին Անդրկովկասյան ռազմական օկրուգի ռազմական խորհրդի հունիսի 25-ի հրամանը և ընդունեց համապատասխան որոշում։ Հանրապետության քաղաքներում ու շրջաններում կազմակերպվեցին կործանիչ գումարտակներ, որոնց ղեկավարում էր օպերատիվ շտաբը։ Կործանիչ գումարտակներ ուղարկվեցին պահեստի հրամանատարներ, պաշտ-ավիաքիմի հրամանատարական կազմի զգալի մասը, փորձված կոմունիստներ, սովետական, արհմիութենական, կոլտնտեսային ակտիվիստներ, նախկին կարմիր պարտիզաններ։ Կործանիչ գումարտակները անմիջականորեն ենթարկվում էին ՀՍՍՀ ներքին գործերի ժողկոմատին։ Դրանք կոչված էին չեզոքացնելու թշնամու կողմից մեր երկիրը ուղարկվող լրտեսներին, դիվերսանտներին, պարաշյուտային դեսանտներին։ Երևանում կործանիչ գումարտակների կազմում ընդգրկված էին 4800 հոգի, Լենինականում՝ 500, Կիրովականում՝ 200 և այլն[13]։

Ամբողջ հանրապետությունում կործանիչ գումարտակների մեջ էին ընդգրկված 9507 հոգի։ Նրանցից 700-ը սովորում էին պարաշյուտիստի մասնագիտություն։

Կարևոր խնդիր էր արդյունաբերական ձեռնարկությունների, կամուրջների, էլեկտրակայանների և այլ օբյեկտների պաշտպանությունը։ Այդ նպատակով մտցվեց ռազմականացված պահակություն և անցագրային համակարգ։ Հանրապետության ՆԳԺԿ-ին կից կարևորագույն օբյեկտների պահպանության բաժինը սերտ կապերի մեջ էր կործանիչ գումարտակների միավորման շտաբի հետ[14]։ Համատեղ միջոցառումների շնորհիվ բարելավվեց հասարակական կարգի պաշտպանությունը, պայքարը կեղծ լուրեր տարածողների, թիկունքի կազմալուծիչների և թշնամական այլ տարրերի դեմ։

Մեծ նշանակություն էր տրվում կործանիչ գումարտակի մարտիկների ռազմական ուսուցմանը, որի ընթացքում մարտիկներն անցնում էին շարային պատրաստականություն, կատարում սվինամարտի վարժություններ, զբաղվում հրաձգությամբ։ Տակտիկական պարապմունքների ընթացքում սովորում էին թշնամու պարաշյուտային դեսանտների, դիվերսանտների և լրտեսների դեմ պայքարի ձևերն ու մեթոդները։ Պարաշյուտիստների դասընթացներում ընդգրկված էին երիտասարդ տղաներ ու աղջիկներ։ Նրանք սովորում էին պարաշյուտային թռիչքի տեխնիկան, պայթեցման գործը, զենքի զանազան տեսակներ, հետախուզության և ռազմական այլ մասնագիտություններ[15]։

---

13 ՄԱԻ ՀՄԿԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 122, թ. 8։

14 Նույն տեղում, ֆ. 1, ց. 29, գ. 318, թ. 103։

15 «Հուշեր Մեծ հայրենականից», Երևան, 1968, էջ 27։

Լարված և արդյունավետ ուսուցման շնորհիվ կործանիչ գումարտակները շուտով դարձան մարտունակ և քաղաքականապես կոփված միավորումներ, որոնք մշտապես գտնվում էին մարտական պատրաստ վիճակում։

1942 թ. ամռանը ուժեղացավ Թշնամու Անդրկովկաս ներխուժման վտանգը։ 1942 թ. սեպտեմբերի 22-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմը քննարկեց ՍՍՀՄ ՆԳԺԿ «Թշնամու կողմից Հայկական ՍՍՀ ուղարկվող դիվերսանտների և հետախույզների, պարաշյուտային խմբերի դեմ պայքարի ուժեղացման մասին» դիրեկտիվը[16]։ Այն քննարկեցին նաև ՀԿ/բ/Կ քաղաքային և շրջանային կոմիտեները, սկզբնական կուսակցական կազմակերպությունները։ Բնակչության շրջանում ուժեղացվեց բացատրական-մասսայական աշխատանքը զգոնության բարձրացման, լուսաքողարկման կանոնների և անձնագրային ռեժիմի պահպանման ուղղությամբ։ Կործանիչ գումարտակների պաշտպանությանն էր հանձնվել ճանապարհների, լեռնանցքների, կամուրջների մոտ ըստեղծված վերահսկող-բացթողնող կետերի պաշտպանությունը։ Տեղանքի և օդի դիտարկումների համար օգտագործվում էին կոլտնտեսականները, անտառատնտեսություններում, խոտհարքներում աշխատողները։ Կործանիչ գումարտակները սերտ կապ էին պահպանում տվյալ վայրի զորամասի հետ և ունեին Թշնամու պարաշյուտային դեսանտների դեմ համատեղ պայքարի պլան։ 1942 թ. սեպտեմբերի 14-ի գիշերը ֆաշիստական ինքնաթիռ նկատվեց Լենինականից 45 կմ հեռավորության վրա[17], իսկ հոկտեմբերի 1-ին Երևանի վրա՝ 5500—6000 մետր բարձրությամբ[18]։ Հանրապետության ծայրամասային, հատկապես անտառային շրջաններում նկատվում էին Թշնամական տարրերի գործողություններ[19]։ Ներքին գործերի մարմինների և կործանիչ գումարտակների համատեղ գործողությունների շնորհիվ հայտնաբերվում և վնասազերծ էին արվում Թշնամու լրտեսներն ու դիվերսանտները։ Կործանիչ գումարտակները հանրապետությունում գոյություն ունեցան մինչև պատերազմի վերջը, մշտապես գտնվելով մարտական պատրաստ վիճակում։ Դրանց առավել աչքի ընկած մարտիկները պարգևատրվեցին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրով, թանկարժեք նվերներով։ Նրանցից շատերը պարգևատրվեցին «Կովկասի պաշտպանության համար» մեդալով։

Անդրկովկասի ռազմաճակատի ռազմական խորհուրդը հաշվի առնելով գերմանա-սովետական ռազմաճակատում ստեղծված վիճակը, 1941 թ. սեպտեմբերի 20-ին որոշում կայացրեց անդրկովկասյան հանրապետություններում պաշտպանական կառույցների շինարարության մասին[20]։ ՀԿ/բ/Կ Կենտկոմը, քաղաքային և շրջանային կոմիտեները եռանդուն աշխատանք ծավալեցին պաշտպանական շինարարության աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ։ Այն անմիջականորեն իրականացվում էր աշխատավորների դեպուտատների քաղաքային և շրջանային սովետների գործադիր կոմիտեների միջոցով։

Հայաստանում պաշտպանական ամրությունների շինարարությունը նախատեսված էր երկու հերթով։ Առաջին հերթի աշխատանքները սկսվեցին 1941 թ. հոկտեմբերի 1-ից՝ Սպիտակի, Կարախաչի, Սեմյոնովկայի և Բիչենագի տեղամասերում։ Այդ աշխատանքներին մասնակցում էին հանրապետության 7 շրջանների աշխատավորներ։ Ամեն օր աշխատանքի էին դուրս գալիս շուրջ 7500 հոգի։ Երկրորդ հերթի աշխատանքները, որոնց մասնակցում էին 8756 մարդ, սկսվեցին 1941 թ. նոյեմբերի 5-ից[21]։ Շնորհիվ ծավալված

16 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 46, ց. 5, գ. 190, թ. 138։

17 ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության արխիվ, ֆ. 400, ց. 9468, գ. 26, թ. 490։

18 Նույն տեղում, գ. 26, թ. 504։

19 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 31, գ. 6, թ. 101, գ. 42, թ. 1, ց. 31, գ. 40, թ. 135։

20 Նույն տեղում, ց. 30, գ. 34, թ. 124։

21 Նույն տեղում, գ. 18, թ. 5։

լայն բացատրական աշխատանքի, հանրապետության ազգաբնակչությունը հաճախ կլիմայական անբարենպաստ պայմաններում ակտիվ մասնակցություն էր ցույց տալիս պաշտպանական կառույցների շինարարությանը։ Շինարարության վրա աշխատում էին մեծ քանակությամբ կանայք և պատանիներ։

ՀԿ/բ/Կ Կենտկոմը, քաղաքային և շրջանային կոմիտեները ամենօրյա ուշադրություն էին դարձնում պաշտպանական կառույցների շինարարությանը, անում ամեն ինչ, առաջադրանքները ժամանակին կատարելու համար։ ՀԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղար Ա. Սարգսյանը նշանակված էր Կենտկոմի լիազոր ներկայացուցիչ՝ Հայկական ՍՍՀ տարածքում կատարվող պաշտպանական կառույցների շինարարությունում։ Կենտկոմի քարտուղարներ Ի. Սոլինսկին, Մ. Իսկանդարովը, Ա. Զախկալյանը և բաժնի վարիչ Ա. Օկսուզյանը կցված էին առանձին տեղամասերի։ Նրանց իրավունք էր վերապահված, անհրաժեշտության դեպքում մոբիլիզացնել ինժեներատեխնիկական աշխատողների՝ շինարարությանը տեխնիկական օգնություն ցույց տալու համար[22]։

Կուսակցության քաղաքային և շրջանային կոմիտեները, աշխատավորների դեպուտատների շրջանային սովետների գործադիր կոմիտեները հոգ էին տանում շինարարությունն անհրաժեշտ բանվորական ուժով ու տրանսպորտով ապահովելու, շինարարների գիշերելու և սննդի հարցերը կազմակերպելու ուղղությամբ։ Չէր անտեսված նաև նրանց շրջանում անցկացվող ագիտացիոն-մասսայական աշխատանքը։ Ագիտ-բրիգադների միջոցով կազմակերպվում էին զեկուցումներ և դասախոսություններ, զրույցներ մեր երկրի ներքին և արտաքին դրության հարցերի շուրջը, կինոդիտումներ և գեղարվեստական ինքնագործունեության երեկոներ։ Նրանց պարտականության մեջ էր մտնում նաև սոցիալիստական մրցության կազմակերպումը՝ տեղամասերի, բրիգադների և բանվորների միջև։ Լույս էին ընծայում պատի թերթեր և «Իլիչովկաներ», որոնցում լուսաբանվում էր շինարարության ընթացքը։

Կուսակցական կոմիտեների և 45-րդ բանակի ռազմական խորհրդի կողմից ձեռք առնված միջոցառումների շնորհիվ պաշտպանական ամրությունների շինարարության առաջին հերթի աշխատանքները հիմնականում ավարտվեցին 1941 թ. դեկտեմբերի վերջին, բացառությամբ մի շարք տեղամասերի, որտեղ կլիմայական անբարենպաստ պայմանների պատճառով աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել էին։ Կարճ ժամանակաշրջանում կառուցվեցին հակատանկային արգելքներ, խրամատներ, ԴՕՏ-եր, ԴՋՕՏ-ներ և այլ պաշտպանական ամրություններ։

Զմռան վրա հասնելու կապակցությամբ, Անդրկովկասի ռազմաճակատի ռազմական խորհրդի 1941 թ. նոյեմբերի 19-ի որոշմամբ պաշտպանական կառույցների երկրորդ հերթի շինարարական աշխատանքները դադարեցվեցին մինչև 1942 թ. ապրիլի 15-ը[23]։ Զմռան ամիսներին զգալի նախապատրաստական աշխատանքներ կատարվեցին հատկապես անտառանյութի, շինանյութերի կուտակման, շինարարական մեխանիզմների և գործիքների վերանորոգման ուղղությամբ։

1942 թ. գարնանը վերսկսվեց պաշտպանական կառույցների շինարարությունը։ Այն մեծ չափերով աճեց Կովկասի պաշտպանության օրերին։ Այդ աշխատանքներին մասնակցում էին հանրապետության շինարարական ձեռնարկությունները, որոնք մատակարարում էին երկաթբետոնե կոնստրուկցիաներ, շինանյութեր և գործիքներ։ Պաշտպանական շինարարությանը մասնակցում էին բարձր դասարանի աշակերտներ, ուսանողներ, տնային տնտեսուհիներ։ Աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի 1942 թ. սեպտեմբերի 28-ի որոշմամբ պաշտպանական կառույցների շինարարության վրա աշխատելու համար մոբիլիզացվեց քա-

22 Նույն տեղում, գ. 41, թ. 96։

23 Նույն տեղում, ց. 30, գ. 48, թ. 71։

ղաքի ողջ աշխատունակ բնակչությունը և գումակային տրանսպորտը[24]։ Լրացուցիչ տրամադրվեց 384 տոննա ցեմենտ, 3584 խ. մ. անտառանյութ, 2582 խ. մ. բազալտ, 10 հազ. երկաթյա ռելսեր, 56 տ. փշալար, 5000 հակատանկային ական և այլ նյութեր[25]։ Կառուցվեցին 7 կմ երկարությամբ հակատանկային փոս, 5 կմ կարճասյուներ (6000 հատ), 3 կմ էսկարպ[26]։

Պաշտպանական կառույցների շինարարությունը Հայաստանի տարածքում շարունակվեց մինչև 1943 թ. կեսերը։ Հանրապետությունում կարևոր ստրատեգիական ուղղություններում ստեղծվեցին պաշտպանական կառույցներ, որոնք կարևոր նշանակություն ունեցան թիկունքի ամրապնդման գործում։

Պատերազմը հրամայական պահանջ էր ներկայացնում ռազմաճակատի համալրման համար ռեզերվների պատրաստման նկատմամբ։ ՀամԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն և սովետական կառավարությունը կտրուկ միջոցներ ձեռնարկեցին սովետական ժողովրդին ռազմական գիտելիքներով զինելու համար։ 1941 թ. սեպտեմբերի 17-ին Պաշտպանության պետական կոմիտեն որոշում ընդունեց «ՍՍՀՄ քաղաքացիների ընդհանուր պարտադիր ռազմական ուսուցման մասին»[27]։ Ռազմական ուսուցում էին անցնելու ՍՍՀՄ արական սեռի 16-ից 50 տարեկան քաղաքացիները, ուսուցումը նախատեսված էր 110 ժամյա ծրագրով։

Քաղաքացիների ընդհանուր, պարտադիր ռազմական ուսուցումը (ռազմուսը) անմիջականորեն իրականացնում էին զինվորական կոմիսարիատները։ Ռազմուսը հանդիսանում էր կուսակցական և սովետական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրը։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը, կուսակցության քաղաքային և շրջանային կոմիտեները գործնական օգնություն էին ցույց տալիս ռազմուսի աշխատանքներին։ Կարևոր նշանակություն ուներ ղեկավար կադրերի ընտրությունը, նրանց ռազմական ուսուցումը։ Կուսակցական կոմիտեները զինվորական կոմիսարիատների հետ միասին կարճ ժամկետում պահեստի հրամանատարական և քաղաքական կազմից առանձնացրին համապատասխան կադրեր, որոնք ձեռնամուխ եղան բնակչության ռազմական ուսուցմանը։

Կոմերիտական կազմակերպությունները ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս ռազմուսի աշխատանքներին։ Նրանք ռազմուսի ոգին էին, բազմաթիվ նախաձեռնությունների և միջոցառումների հեղինակներ։

Կարճ ժամկետում կոմպլեկտավորվեցին ռազմուսի ստորաբաժանումները։ 1941 թ. հոկտեմբերի 1-ին ամենուրեք սկսվեցին ռազմուսի պարապմունքները։ Առաջին հերթի ուսուցման մեջ էին ընդգրկվել 1923 թ. ծնված և ավագ տարիքի քաղաքացիներ։ Առաջին օրերի արդյունքները քննարկվեցին կուսակցության քաղաքային և շրջանային կոմիտեներում, զինվորական կոմիսարիատներում։ Գոհունակությամբ արձանագրվեց, որ պարապմունքները անցնում են կազմակերպված և գործնականորեն։ Ռազմաուսումնական վարժակայաններում կազմակերպվել էին նաև ռուսաց լեզվի ուսուցման խմբակներ։ Ռազմուսի պարապմունքները լավ էին կազմակերպված Երևանի Լենինյան, Կիրովյան շրջաններում, Լենինական, Կիրովական քաղաքներում և այլ շրջաններում։ Կոմերիտմիության շրջկոմների նախաձեռնությամբ որոշ ձեռնարկություններում աշխատաժամերից դուրս ռազմուսի համար պատրաստվում էին վարժական պարագաներ՝ փայտյա հրացաններ, նռնակներ, խրտվիլակներ, տանկի մա-

---

24 Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև Հայկական ՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 113, ց. 4, գ. 325, թ. 10։

25 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 31, գ. 27, թ. 273։

26 ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության արխիվ, ֆ. 400, ց. 9448, գ. 1, թ. 159։

27 «Коммунистическая партия в Великой Отечественной войне (1941 г.—1945 г.)», с. 59.

կետներ և այլն[28]։ Վերահրատարակվեցին կարգապահական և պահակային ծառայության մասին մի շարք կանոնագրքեր, սվինամարտի, ձեռքի նռնակների, ձեռքի գնդացրի, ականանետի և զենքի այլ տեսակների մասին ձեռնարկներ, որոնք զգալիորեն նպաստեցին ռազմուսի մարտիկների ուսուցման գործին[29]։

1941 թ. դեկտեմբերի 4-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմը քննարկեց ռազմուսի դրությունը Արտաշատի, Աշտարակի և Շահումյանի շրջաններում[30]։ Կենտկոմը կուսակցության քաղկոմ-շրջկոմների և ռազմական կոմիսարիատների ուշադրությունը հրավիրեց ռազմուսի աշխատանքներում տեղ գտած թերությունների վրա։ Վերանայվեցին հրամանատարական կադրերը, նրանց համար կազմակերպվեց ուսուցում, որտեղ նրանք ծանոթացան Հայրենական մեծ պատերազմի փորձին ու ռազմական նորագույն տեխնիկային։

Ձմռան ամիսներին մեծ տարածում և մասսայականություն ստացավ դահուկային սպորտը, որը լայնորեն կիրառվում էր ռազմաճակատում։ Այն դարձավ ռազմուսի ստորաբաժանումների կարևոր խնդիրներից մեկը։ Ռազմուսի մարտիկները սովորում էին դահուկներով քայլել, կատարել մարտական առաջադրանքներ, կրակել հրացանից և հակատանկային հրացանից։ Կարմիր բանակի 24-րդ տարեդարձին նվիրված կոմերիտական-արհմիութենական դահուկային արշավներին 1942 թ. փետրվարին ակտիվ մասնակցեցին նաև ռազմուսի մարտիկները։

1942 թ. հունվարի սկզբներին ավարտվեցին ռազմուսի առաջին հերթի պարապմունքները, որից հետո կազմակերպվեցին քննություններ։ Հանրապետությունում 11740 քաղաքացիներ ռազմուսի միջոցով ձեռք բերեցին ռազմական գիտելիքներ։ Ռազմուսի առաջին հերթի արդյունքները քննարկվեցին ՀԿ/բ/Կ Կենտկոմում, կուսակցության քաղաքային և շրջանային կոմիտեներում, ՀԼԿԵՄ Կենտկոմում և ռազմական կոմիսարիատներում։

Արդյունքները գոհացուցիչ էին. հանրապետության շրջանների ճնշող մեծամասնությունը ռազմուսի գծով հասել էր լավ արդյունքների, հարստացել էր վարժականների նյութական բազան։

Երկրորդ հերթի պարապմունքները հանրապետությունում սկսվեցին 1942 թ. մարտի 15-ից[31]։ Ուսուցման մեջ ընդգրկվեցին 1924 թ. ծնված քաղաքացիներ և ավագ տարիքի զինապարտներ, որոնք չէին անցել ռազմական ուսուցում։ Հրամանատարական կազմը որոշակի փորձ էր ձեռք բերել և համալրվել էր ճակատայիններով։ Երկրորդ հերթի ժամանակ մեծ ուշադրություն դարձվեց մայլերներ, տանկեր կործանողներ, ականաձիգներ և հաստոցավոր գնդացրորդներ պատրաստելու գործին։ Կոմպլեկտավորվեցին կոմերիտական-երիտասարդական հատուկ ջոկատներ, որոնք պարապմունքներն անց էին կացնում հիմնականում դաշտային պայմաններում։ Այդ ստորաբաժանումներում ընդգրկված 1507 սովորողները, հաջողությամբ հանձնելով քննությունները, մեկնեցին ռազմաճակատ։

1943 թ. ռազմուսն ավարտեցին չորրորդ և հինգերորդ հերթի սովորողները, թվով 23320 հոգի։ Նրանք հրաձիգի մասնագիտությունից բացի ձեռք էին բերել ավտոմատավորի, ականաձիգի, սնայպերի, հակատանկային հրացանի մարտիկի, տանկ կործանողի մասնագիտություններ[32]։ Չորրորդ և հինգերորդ հերթերն ունեին նաև մեկ այլ առանձնահատկություն՝ ռազմուսի սիստեմում սկսվեց լեռնային հրաձիգների պատրաստումը[33]։ Լեռնահրաձգային ստորաբաժանումները կոմպլեկտավորվեցին փորձված հրամանատարական-

28 ՄԻ ՀՄԿԱ, ֆ. 48, ց. 5, գ. 439, թ. 136։
29 Նույն տեղում, ֆ. 1, ց. 29, գ. 309, թ. 95։
30 Նույն տեղում, գ. 55, թ. 115։
31 Նույն տեղում, ց. 30, գ. 48, թ. 106։
32 Նույն տեղում, ց. 34, գ. 385, թ. 39։
33 Նույն տեղում, ց. 32, գ. 41, թ. 492։

քաղաշխատողների կազմով։ Այդ ստորաբաժանումներում ընդգրկվեցին առավելապես լեռնային շրջանների երիտասարդները։ Երկու հերթի ժամանակ պատրաստվեցին ավելի քան 4000 լեռնային հրաձիգներ, որոնց զգալի մասը մեկնեց ռազմաճակատ[34]։

Հանրապետության ռազմական կոմիսարիատի ռազմուսի բաժինը, ՀԼԿԵՄ Կենտկոմի առաջարկությամբ, ռազմուսի սիստեմում կազմակերպեց կին սնայպերների և ավտոմատավորների կուրսեր։ Այդպիսի կուրսեր էին կազմակերպվել Երևանում,[35] Ղափանում,[36] Եղեգնաձորում[37] և այլ քաղաքներում ու շրջաններում։ Դրանք ավարտեցին 1400 կին ու աղջիկ, որոնք ձեռք բերեցին սնայպերի և ավտոմատավորի մասնագիտություն[38]։ Նրանց զգալի մասը մեկնեց գործող բանակ։

Ռազմուսի աշխատանքներին ամենօրյա գործնական օգնություն էին ցույց տալիս ՀԿ/բ/Կ քաղաքային և շրջանային կոմիտեների ռազմական բաժինները։ Ռազմուսի ստորաբաժանումներ էին ուղարկվում կուսակցական և կոմերիտական աշխատողներ՝ որպես վաշտի և դասակի հրամանատարների քաղաքական գծով տեղակալներ։ Կուսակցության քաղաքային և շրջանային կոմիտեների ամենօրյա օգնության և ղեկավարության շնորհիվ ռազմուսի պարապմունքներն անցնում էին կազմակերպված և արդյունավետ։ Քաղաքացիների ռազմական պարտադիր ուսուցումը տևեց մինչև 1945 թ. մարտը։ Այդ ժամանակաշրջանում տեղի ունեցան 7 հերթի պարապմունքներ։ Դրանց ընթացքում ռազմական 11 մասնագիտությունների գծով գիտելիքներ ստացան 84477 քաղաքացիներ, որոնցից 55730-ը զորակոչվեց կարմիր բանակ։ Պարտադիր ռազմական ուսուցում էր մտցված նաև ուսումնական հաստատություններում, միջնակարգ դպրոցներում, տեխնիկումներում, բուհերում, որտեղ պարապմունքները վարում էին փորձված սպաներ, Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ։ Սովորող երիտասարդությունը ռազմական անհրաժեշտ գիտելիքներ էր ստանում սերժանտական և սպայական կազմի ծրագրով[39]։ Միջնակարգ դպրոցի բազայի վրա Երևանում գործում էր 2 մասնագիտացված հատուկ դպրոց, որոնցից մեկը կադրեր էր պատրաստում հրետանու, իսկ մյուսը՝ ռազմաօդաչուական ուսումնարանների համար[40]։ Երևան էր տեղափոխվել նաև ռազմաօդային ուժերի Դոնի Ռոստովի № 10 հատուկ դպրոցը։ Այդ դպրոցների հարյուրավոր սաներ, ավարտելով ուսումը, մեկնեցին ռազմական ուսումնարաններ և ռազմաճակատ։

Իրենց աշխատանքները պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցեցին ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, պաշը-ավիաքիմի կազմակերպությունները, Կարմիր խաչի ընկերությունները։ Նրանք ակտիվորեն ձեռնամուխ էին եղել ռազմաճակատի համար համալրում պատրաստելու, թիկունքի պաշտպանության ամրապնդման գործին։ Հանրապետության ԼԿԵՄ կազմակերպությունների նախաձեռնությամբ անցկացված նռնականետման մրցումները, հետիոտն և դահուկային արշավները և դրանց նախապատրաստական աշխատանքներն ամբողջությամբ կատարվում էին սպորտային կազմակերպությունների միջոցով։ Սվինամարտի ուսուցման գործի բարելավման նպատակով կազմակերպում էին սվինամարտի ուսուցման ղեկավարների հավաքներ։ Նրանք նշանակալից գործ էին կատարում ռազմուսի լեռնային հրաձիգների ուսուցման ստորաբաժանումներում, դահուկային սպորտի մասսայա-

---

34 Նույն տեղում, գ. 49, թ. 73։

35 «Սովետական Հայաստան», 4. XII. 1942։

36 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 30, գ. 48, թ. 107։

37 «Սովետական Հայաստան», 7, VII. 1942։

38 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 34, գ. 385, թ. 39։

39 Նույն տեղում, ց. 29, գ. 313, թ. 124։

40 Ա. Վ. Վարդապետյան, Հայաստանի արհմիությունների պատմություն (1905—1965), Երևան, 1969, էջ 231։

կանացման ուղղությամբ, «Պատրաստ աշխատանքի և պաշտպանության» (ՊԱՊ) և «Եղիր պատրաստ աշխատանքի և պաշտպանության» (ԵՊԱՊ) նորմայով աշխատավորության և սովորողների ռազմական ուսուցման ուղղությամբ։

Պաշը-ավիաքիմի կազմակերպությունները պատերազմի առաջին իսկ օրերից գլխավորեցին քաղաքացիական բնակչության հակաօդային և հակաքիմիական պատրաստության գործը։ ՍՍՀՄ Ժողկոմխորհի 1941 թ. հուլիսի 2-ի որոշմամբ ՍՍՀՄ 16—60 տարեկան բոլոր քաղաքացիները պետք է անցնեին հակաօդային և հակաքիմիական ուսուցում[41]։ Այդ գործի պատասխանատվությունը և ղեկավարությունը դրված էր տեղական սովետների և պաշը-ավիաքիմի կազմակերպությունների վրա։ Բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում, ֆաբրիկաներում ու գործարաններում, կոլտնտեսություններում ու սովխոզներում, ուսումնական հաստատություններում և գիտահետազոտական ինստիտուտներում ստեղծվեցին ինքնապաշտպանության խմբեր, որոնք վարժական պարապմունքներ էին անցկացնում, ուսումնասիրում էին հակագազի կառուցվածքը, նրա գործածության կանոնները, թունավոր նյութերից պաշտպանվելու ձևերը։ Լայն թափ ստացավ քաղաքներում և այլ բնակավայրերում ռմբապաստարանների, գազապաստարանների, խրամատային տիպի ապաստարանների կառուցումը։ Պաշը-ավիաքիմի կազմակերպությունները զգալի գործ էին կատարում ռազմաճակատի համար ուսուցանված ռեզերվների պատրաստման ուղղությամբ։ Պաշը-ավիաքիմի ակումբներում և ուսումնավարժական կայաններում հարյուրավոր երիտասարդներ և պատանիներ սովորում էին օդաչուի, պարաշյուտիստի, տանկիստի, ավտովարորդի, մոտոցիկլետիստի, ռադիստի մասնագիտություններ և մեկնում գործող բանակ։

Կուսակցական, սովետական, կամավոր պաշտպանական կազմակերպությունների լարված աշխատանքի շնորհիվ 1942 թ. հոկտեմբերի 1-ին հանրապետությունում հիմնականում ավարտվեց քաղաքացիական բնակչության ընդհանուր պարտադիր հակաօդային և քիմիական պաշտպանության պատրաստումը։

Պատերազմի պայմաններում ավելի քան երբեք աճեց Կարմիր խաչի ընկերության դերն ու նշանակությունը։ 1941 թ. հուլիսի 1-ից Երևանում և հանրապետության մի շարք շրջաններում բացվեցին դասընթացներ, որտեղ պատրաստում էին բուժքույրեր, սանիտարներ և սանհրահանգիչներ։ Արդեն 1941 թ. նոյեմբերին այդ դասընթացներն ավարտեցին 900 սանիտարներ և 668 բուժքույրեր[42]։ Նրանց մեծ մասը մեկնեց ռազմաճակատ և աշխատանքի անցավ էվակոհոսպիտալներում։ Կարմիր խաչի քաղաքային և շրջանային կոմիտեները գործնական աշխատանք էին կատարում բնակչության սանիտարապաշտպանական ուսուցման ուղղությամբ. նրանք կազմակերպում էին ՊՍՊ-ի և ԵՊՍՊ-ի կրծքանշանի նորմաների ուսուցում։ Այսպիսով, հանրապետության կուսակցական կազմակերպությունները ղեկավարվելով Համկ/բ/կ Կենտկոմի որոշումներով ու ցուցումներով, պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում կազմակերպեցին և ուղղություն տվին սովետական, արհմիութենական, հասարակական կազմակերպությունների աշխատանքներին, պաշտպանեցին և խրախուսեցին ժողովրդի հայրենասիրական նախաձեռնությունները, մոբիլիզացրին քաղաքի և գյուղի աշխատավորությանը թիկունքի պաշտպանության, հանրապետության առջև դրված ռազմական և տնտեսական բարդ խնդիրների կատարմանը ցուցաբերելով բոլշևիկյան կայունություն, օպերատիվություն և ստեղծագործական նախաձեռնություն։

---

41 «Коммунистическая партия в Великой Отечественной войне (1941 г.—1945 г.)», с. 45.

42 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 30, գ. 18, թ. 10։